ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2005

Ձարգացումը
Վերահսկողությունը
Կարգավորումը

2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Բանկային համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 6

Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 14

Վերահսկողությունը 2005 թվականին 19

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 21

ՀՀ բանկային համակարգը 2005 թվականին 23

Ընդհանուր դրույթներ 23

Բանկային համակարգի կապիտալը 25

Բանկային համակարգի պարտավորությունները 27

Բանկային համակարգի ակտիվները 31

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 37

Վճարահաշվարկային համակարգ 40

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 42

ՀՀ ֆինանսական շուկայի այլ մասնակիցները 2005 թվականին 47

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները 47

ՀՀ ապահովագրական շուկան 49

ՀՀ արժեթղթերի շուկան 51

ՀՀ տարածքում գործող փոխանակման կետերը և գրավատները 53

Վերահսկողության զարգացման հեռանկարները 54

Հավելվածներ 61

ՆԱԽԱԲԱՆ

2005 թվականին մակրոտնտեսական միջավայրում դարձյալ շարունակվել են վերջին տարիներին ձևավորված կայուն զարգացման միտումները, որոնք բարենպաստ ազդեցություն են ունեցել նաև բանկային համակարգի զարգացումների վրա:

Հաշվետու տարում արձանագրվել է բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացում, որին նպաստել են նաև նախորդող մի քանի տարիներին այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները: Այդ ձեռնարկումների շնորհիվ մի կողմից ապահովվել է ֆինանսական միջոցների ներհոսք բանկային համակարգ, մյուս կողմից՝ վարկավորման մի շարք կայացած մեխանիզմների և տնտեսական ակտիվության շնորհիվ էականորեն ավելացել են վարկերի ծավալները: Բանկային համակարգը, գործելով մրցակցային միջավայրում, հաշվետու տարում ներգրավել է հաճախորդների ավելի լայն շրջանակներ: Վերջին տարիներին ֆինանսական միջնորդության մակարդակի աճը վկայում է, որ տնտեսության կայուն զարգացման պայմաններում բանկային համակարգը ընդարձակման ու խոշորացման բավականաչափ ներուժ ունի:

Անվանական ՀՆԱ-ի 17.5% աճի համեմատ բանկային համակարգի ակտիվների 21.2% և տնտեսությանը տրամադրված վարկերի 39.1% առաջանցիկ աճի տեմպերի պարագայում 0.6 տոկոսային կետով աճել է բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը, 1.3 տոկոսային կետով՝ բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և կազմել են համապատասխանաբար 19.8% և 8.3%: Այդուհանդերձ, ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում դեռևս խիստ ցածր է[1]:

Որպես ֆինանսական միջնորդության մակարդակի բնութագրիչ՝ տոկոսադրույքների սպրեդի համեմատաբար բարձր մակարդակը վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում անբավարար ֆինանսական միջնորդության աստիճանի մասին: 2005 թվականին տոկոսադրույքների սպրեդը շարունակել է մնալ բավականին բարձր՝ տատանվելով 13-16%-ի միջակայքում: Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 5 տոկոսային կետ կազմող սպրեդի նկատմամբ ՀՀ բանկերի տոկոսադրույքների սպրեդը մնում է բավականին բարձր:

Սպրեդի բարձր մակարդակը հիմնականում վարկերի բարձր պահանջարկի պայմաններում դրանց սահմանափակ առաջարկի առկայության արդյունք է: Ներկայումս հետզհետե ավելանում է երկարաժամկետ վարկերի պահանջարկը, մինչդեռ տնտեսությունում նկատվում է «երկար» խնայողությունների բացակայություն, ինչի հետևանքով ֆինանսական միջոցների ներգրավման-տեղաբաշխման անհամապատասխանությունից առաջանում է այլ ռիսկերից

[1] *Մի շարք եվրոպական երկրներում և նախկին խորհրդային տարածքի որոշ հանրապետություններում բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 50% և ավելի:*

(իրացվելիության, տոկոսադրույքների) ակնկալվող կորուստների լրացուցիչ փոխհատուցման խնդիր: Այս առումով Կենտրոնական բանկը 2006 թվականին կստանձնի նաև ֆինանսական շուկայի այլ մասնակիցների (ապահովագրության շուկա, արժեթղթերի շուկա) վերահսկողությունը և կձեռնարկի դրանց զարգացմանն ուղղված մի շարք քայլեր, քանզի տնտեսությունում «երկար փողերի» ձևավորման կարևորագույն նախադրյալ է հզոր ապահովագրական և արժեթղթերի շուկաների առկայությունը:

Իրականացնելով բանկային համակարգի կայուն զարգացման և ռիսկերի նվազեցման քաղաքականություն՝ ԿԲ-ն 2005 թվականին հիմնականում կարևորել է բանկերում կորպորատիվ կառավարման հիմնարար սկզբունքների ներդրումը: Այս առումով և՛ օրենսդրական փոփոխությունները, և՛ վերահսկողությունը հիմնականում վերոնշյալ քաղաքականության իրականացման նպատակ են հետապնդել: Այսպես, 2005 թվականին ընդունվել է ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվել են բանկերի կառավարման մարմինների՝ մասնավորապես բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի, խորհրդի, գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի իրավական կարգավիճակը, ձևավորման և գործունեության կազմակերպման չափանիշները, կորպորատիվ կառավարման այլ դրույթներ:

Միաժամանակ, 2005 թվականին բանկերում իրականացված նպատակային ստուգումները հիմնականում ուղղվել են ԿԲ առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկի, այն է՝ բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրմամբ ներքին հսկողության համակարգերի թերությունների բացահայտմանը: Իրականացված նպատակային ստուգումները մեծամասամբ կատարվել են «բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների կատարման, բանկի ռիսկերի կառավարման համակարգի» ուսումնասիրության նպատակով:

Բանկերի և ԿԲ կողմից վարվող հետևողական քաղաքականությունների արդյունքում ՀՀ բանկային համակարգում առկա ռիսկերը ներկայումս գտնվում են կառավարելի շրջանակներում:

2005 թվականին բանկային համակարգում տեղի են ունեցել մի շարք դրական զարգացումներ, որոնցից հատկանշական են եղել.

- բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների արժութային կառուցվածքի էական փոփոխությունները. դրամային ակտիվներն ու պարտավորություններն ավելացել են համապատասխանաբար 49%-ով և 44%-ով, իսկ արտարժութային ակտիվներն ու պարտավորությունները՝ 4%-ով և 5%-ով, որի արդյունքում բավականին մեծացել են դրամային ակտիվների և պարտավորությունների տեսակարար կշիռները:
- ավանդների արժութային կառուցվածքի էական փոփոխությունը. ավանդների աճն ամբողջությամբ ապահովվել է դրամային ավանդների աճի հաշվին, որի արդյունքում զգալիորեն մեծացել է դրամային ավանդների տեսակարար կշիռը:

- բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամի աննախադեպ աճը (աճել են 50%-ով),
- վարկավորման ծավալների կտրուկ աճը (աճել են 39%-ով), ինչի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում տնտեսության վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 5.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 41.8%:

Վարկերի քանակը տարվա ընթացքում ավելացել է 35%-ով և տարեվերջին կազմել 222.4 հազար հատ: Վարկերի ծավալային և քանակական աճի պարագայում վարկային ներդրումների որակի վատացում չի արձանագրվել: Հատկանշական է, որ պահպանվել են տնտեսության ճյուղերի վարկավորման՝ նախորդ տարի դրսևորված սեզոնայնությունները: 2005 թվականին բանկային համակարգի վարկավորման աճը, ինչպես և վերջին տարիներին, հիմնականում տեղի է ունեցել սպառողական (ներառյալ հիփոթեքային վարկերը) և առևտրային վարկերի հաշվին: Սպառողական վարկերի 22.6 մլրդ դրամ աճին նպաստել է նաև բնակչության զուտ տնօրինվող եկամտի աճը (2005 թվականին մասնավոր հատվածի տնօրինվող եկամուտներն աճել են 16%-ով):

2005 թվականին անվանական ՀՆԱ աճին հիմնականում նպաստել են արդյունաբերության, շինարարության ճյուղերը և ծառայությունների ոլորտը: Չնայած շինարարության աճը հիմնականում ապահովվել է ոչ թե բանկային համակարգի վարկավորման, այլ մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորված շինարարության ծավալների աճի հաշվին, այնուամենայնիվ շինարարության ոլորտում թողարկման անվանական աճը կազմել է 59%, որին զուգահեռ, բանկային համակարգի կողմից ճյուղի վարկավորումն ավելացել է 49%-ով: Ծառայությունների ոլորտում տարվա ընթացքում արձանագրվել է 34% աճ, որին զուգահեռ, բանկային համակարգի կողմից այս ոլորտի վարկավորումն ավելացել է 65%-ով:

Արդյունաբերության ճյուղի վարկերը 2005 թվականին ավելացել են 10%-ով, իսկ ճյուղի թողարկման անվանական աճը կազմել է 22%: Նախորդ տարիների համեմատ թողարկման անվանական բարձր աճ է արձանագրվել մշակող արդյունաբերության ճյուղում՝ 26% աճ:

Վարկային ներդրումների արագատեմպ աճին զուգընթաց, նույնիսկ փոքր-ինչ լավացել է բանկային համակարգի ակտիվների որակը, ինչից կարելի է դատողություններ անել նաև բանկային վերահսկողության արդյունքների մասին: Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է ընդհանուրի ընդամենը 1.6%-ը, որի մեծ մասը հսկվող դասի ակտիվներն են: Որպես հետևանք՝ տարվա ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.3%՝ վկայելով վարկային ռիսկի ցածր մակարդակի մասին:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բանկային վերահսկողություն իրականացնող և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումների գործառույթները

Կենտրոնական բանկն իր լիազորությունների սահմաններում ապահովում է բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության անհրաժեշտ պայմաններ, պաշտպանում է վարկատուների և ավանդատուների շահերը: Այս խնդիրների իրականացման շրջանակներում, բանկային վերահսկողության համար Կենտրոնական բանկի պատասխանատու և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումներ են հանդիսանում Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների, Վիճակագրության և Իրավաբանական վարչությունները:


Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների և Իրավաբանական վարչություններն աջակցում են բանկային վերահսկողության գործընթացին՝ մեթոդաբանական, վերլուծական և իրավական առումներով: Վիճակագրության վարչությունը ԿԲ կողմից լիցենզավորված անձանցից տեղեկատվություն է հավաքագրում և ամփոփում:

Բանկային վերահսկողության վարչությունն իրականացնում է բուն վերահսկողական գործընթացները.

- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների (վարկային կազմակերպություններ, արտարժույթի փոխանակման կետեր, արտարժութային դիլերներ, արտարժութային բորսաներ) լիցենզավորումը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության հեռակա վերահսկողությունը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության տեղերում վերահսկողությունը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության դադարեցումը:

Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների և Իրավաբանական վարչությունների ղեկավարները ԿԲ լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներ են, որը ԿԲ նախագահի կամ խորհրդի խորհրդակցական մարմին է և ունի իր իրավասությունների սահմաններում որոշում ընդունելու իրավունք:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովում ընդգրկված վարչությունները և դրանց կառուցվածքը (31.12.2005 թ. դրությամբ)



Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը

ՀՀ կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը ԿԲ նախագահի կամ խորհրդի խորհրդակցական մարմին է, որը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը: Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի գործառույթներն են.

- ✓ բանկերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերին, բանկերի մասնաճյուղերին և ներկայացուցչություններին գրանցելու և լիցենզավորելու հարցերը,
- ✓ բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների, արժութային դիլերների, փոխանակման կետերի ղեկավարների և աշխատակիցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության, գրանցման հարցերը,
- ✓ բանկի կողմից թույլ տրված խախտումների, խախտում թույլ տված բանկերի բացատրությունների և առարկությունների, խախտում թույլ տված բանկի նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումներ ընդունելը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ կազմակերպությունների լիցենզավորման և գրանցման հարցերը.
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած այլ կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումների, առկայության դեպքում՝ վերահսկվող կազմակերպության բացատրությունների և առարկությունների, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումներ ընդունելը,
- ✓ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Կանոնակարգ 1-ով» նախատեսված փոփոխությունների գրանցման խնդիրները,
- ✓ Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններից բխող հարցեր:

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

Կենտրոնական բանկի կողմից բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավար-

ների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի, «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի, «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ի, «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի, «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ի, «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի, «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ի և «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ի հիման վրա: Այս աշխատանքների պատասխանատու ստորաբաժանումը Բանկային վերահսկողության վարչության Լիցենզավորման և բանկային ռեգիստրի բաժինն է:

Կենտրոնական բանկի խորհուրդը հավանություն է տալիս այնպիսի բանկերի հիմնադիրների միջնորդագրին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,
- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է և բավարարում է Կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևին,
- ✓ ապագա բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար է ստորաբաժանումների միջև բնականոն հարաբերությունների ապահովման և ռիսկերի արդյունավետ կառավարման համար,
- ✓ գործադիր մարմնի և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերը արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ:

Բանկի, բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների) նշանակվող կամ

ընտրվող ղեկավարների թեկնածուների, արժութային դիլերների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են:

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վերահսկողությունը

Բանկերի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների հեռակա վերահսկողությունը և վերստուգվող անձանց մոտ ստուգումներն իրականացվում են Բանկային վերահսկողության վարչության չորս բաժինների կողմից: Վարչության երեք բաժինները վերահսկում են բանկային հաստատությունները, իսկ մեկ բաժինը՝ վարկային կազմակերպությունները:

Բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հեռակա վերահսկողությունը բանկերից ստացված տեղեկատվության (հաշվետվությունների և այլ տեսքով) հիման վրա բանկի գործունեության շարունակական վերլուծությունն է՝ բանկի ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու բանկային գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանելիության ստուգման նպատակներով: Հեռակա վերահսկողության հիմնական խնդիրը բանկի ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է՝ բանկերի հնարավոր կորուստները կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ըստ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի, «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի պահանջների, վերահսկվող մարմինները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և ներկայացման ժամկետներով, որոնք, համապատասխան ստուգումներից հետո, տրվում են Բանկային վերահսկողության և Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություններին: Վերոնշյալ վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություն-

ներից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում բանկից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից:

Բանկերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի/վարկային կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, նշվում են բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի/վարկային կազմակերպության ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են դրանց փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված ռիսկերը կառավարելու նպատակով: Հեռակա վերահսկողությունն ուղղված է նաև բանկի/վարկային կազմակերպության սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատմանն ու վերլուծությանը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծության են ենթարկվում բանկերի վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են VAR, դյուրացիայի, GAP մեթոդաբանությունները և սթրես - թեստերը:

Բանկերից ստացված տեղեկատվության հիման վրա, ամսական կտրվածքով հաշվարկվում է բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ ՔԱՄԵԼՍ-ը: Ուսումնասիրելով ու վերլուծելով հաշվետվությունների հիման վրա հաշվարկված ՔԱՄԵԼՍ-ի գնահատականները, վերջինս ձևավորող ցուցանիշները, ցուցանիշների փոփոխության հիմնական պատճառներն ու միտումները՝ վերահսկողն իրականացնում է ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների ճշգրտումներ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգի»: ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար:

ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը տատանվում է 1-5 միավորանոց սանդղակում, ընդ որում՝ գնահատականի՝ 3 միավորից պակաս արդյունքը ՀՀ կենտրոնական բանկի համար կարող է բանկի տարածքային ստորաբաժանումների բացման միջնորդագիրը մերժելու, առավել խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ կամ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև որոշ գործարքների իրականացման սահմանափակման հիմք հանդիսանալ: Բանկի ամփոփ գնահատականի՝ 2 միավոր և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) հաշվարկվում է բանկի կապիտալի համարժեքության (Ք), ակտիվների որակի (Ա), կառավարման (Մ), եկամտաբերության (Ե), իրացվելիության (Լ) և շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության (Ս) գնահատումների հիման վրա: ՔԱՄԵԼՍ-ի նշված տարրերի գնահատումն իրականացվում է դրանք բնութագրող տարբեր ֆինանսական հարաբերակցությունների հաշվարկման միջոցով:

Բանկի կապիտալի համարժեքության գնահատման համար հաշվի են առնվում բանկի նորմատիվային կապիտալի մեծությունը, կապիտալի համարժեքության, խոշոր փոխառուների, մեկ փոխառուի, բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվները: Ակտիվների որակի գնահատման ժամանակ դիտարկվում են վարկային ռիսկի մակարդակը, չաշխատող վարկերի և ակտիվների կշիռները, ակտիվների կենտրոնացվածությունը, ակտիվների հնարավոր կորուստների բավարարությունը: ՔԱՄԵԼՍ-ի հաջորդ տարրի՝ եկամտաբերության գնահատման ժամանակ դիտարկվում են ROA, ROE հարաբերակցությունները և հիմնական բանկային գործունեությունից ստացվող եկամուտների մակարդակը բնութագրող մի շարք այլ հարաբերակցություններ: Իրացվելիության գնահատման համար հաշվի են առնվում բանկի ընթացիկ և ընդհանուր իրացվելիության ցուցանիշների մակարդակները, կարճաժամկետում (մինչև 180 օր) պարտավորությունների կատարման հնարավորությունները: ՔԱՄԵԼՍ-ի վերջին տարրի՝ շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության գնահատման ընթացքում դիտարկվում են արտարժութային ռիսկի գծով բանկի դիրքերը, տոկոսադրույքի և անշարժ գույքի գների տատանման ռիսկերի մակարդակները:

Բանկի կառավարման (Մ) գնահատումն իրականացվում է առանձին հարցաթերթիկի պատասխանների արդյունքների հիման վրա: Լրացվող հարցաթերթիկն ընդգրկում է բանկում կորպորատիվ կառավարման, բանկի կազմակերպական կառուցվածքի, ներքին հսկողության ծառայության, ռիսկերի կառավարման ներքին կանոնակարգերի, բանկի աշխատակիցների որակավորման գնահատման վերաբերյալ հարցադրումներ:

Բանկերի ցուցանիշների ՔԱՄԵԼՍ ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես վերը նշված տարրերի գնահատականների միջին թվաբանական:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, առաջացած ռիսկերի պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի ստուգումների ժամանակացույցի հիման վրա, բանկերում և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպություններում իրականացվում են տեղերում վերստուգումներ: Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Ըստ անհրաժեշտության՝ յուրօրինակ գործարք-

ների բացահայտման, տեղեկատվական համակարգերի ստուգման դեպքերում, տեղերում ստուգումներին կարող են մասնակցել նաև ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ (Իրավաբանական, Տեղեկատվական համակարգերի զարգացման վարչություններ և այլն):

Ստուգման ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն՝ «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկում» ներկայացված կարգով:

Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունը իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործո՞ւմ են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Բանկային գործունեության դադարեցման գործընթացներն իրականացվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» օրենքների, ինչպես նաև «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ի համաձայն: Նշված օրենսդրական ակտերով սահմանվում են բանկերի լուծարման և անվճարունակության հիմքերը, բանկի սնանկությունը, ժամանակավոր ադմինիստրացիայի գործողության կարգը և բանկային գործունեության դադարեցման հետ կապված այլ ընթացակարգեր: Բանկը անվճարունակ ճանաչելուն պես նրա կառավարումը անցնում է բանկային ադմինիստրատորներին, որոնց նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը: Չնայած դրան, բանկի նկատմամբ վերահսկողությունը շարունակում է իրականացնել Բանկային վերահսկողության վարչությունը: Բանկի անվճարունակության հիմք են հանդիսանում հիմնական կապիտալի 50 տոկոսը և ավելին սպառելը, պարտատերերի օրինական պահանջները բավարարելու անկարողությունը, պարտադիր պահուստավորման պարբերական խախտումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափից բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի ցածր լինելը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2005 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը կարգավորող օրենսդրական ակտերի բարեփոխման աշխատանքները: Լրամշակվել են բանկերի գործունեությունը կարգավորող օրենքները, արժութային կարգավորման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող օրենքները և ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից:

2005 թվականի նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնք մշակվել էին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Ելնելով բանկային համակարգի կայուն զարգացման և ռիսկերի նվազեցման նկատառումով ԿԲ կողմից էապես կարևորվող կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման անհրաժեշտությունից՝ կատարված օրենսդրական բարեփոխումները հիմնականում ուղղվել են բանկերում կորպորատիվ կառավարման հիմնարար սկզբունքների ներդրմանը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանվել են բանկերի կառավարման մարմինների՝ մասնավորապես բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի, խորհրդի, գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի իրավական կարգավիճակը, ձևավորման և գործունեության կազմակերպման չափանիշները, կորպորատիվ կառավարման այլ դրույթներ: Սահմանվել են նաև դրույթներ, որոնք վերաբերում են բանկերում ներքին և արտաքին աուդիտի հետ կապված ֆունկցիոնալ առանձնահատկություններին:

Մասնավորապես, նպատակ ունենալով բարձրացնել բանկերի կառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը, ապահովել նրանց գործունեության թափանցիկությունը՝ հատկապես բանկի բաժնետերերի և հաճախորդների շահերի պաշտպանության լրացուցիչ կառուցակարգերի ներդրման տեսանկյունից, սահմանվել են հետևյալ դրույթները.

1. Բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի, գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմինների կամ ընդհանրապես այլ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ, եթե տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

Բանկի գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրենության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրենության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

Բանկի գործադիր մարմնի անդամները, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն բանկի խորհրդի համաձայնությամբ:

3. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամները վարձատրվում են:

Սահմանվել է նաև բանկի խորհրդի ձևավորման յուրահատուկ կարգ:

4. Օրենքով սահմանվել է նաև բանկերի կողմից հրապարակվող և տրամադրվող տեղեկությունների բավականին լայն շրջանակ և այլն:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանվել են նաև բանկերի կողմից խոշոր կամ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կարգը, բանկի գործունեության հրապարակայնության ապահովմանը և բանկի ղեկավարների ֆիդուցիար պատասխանատվության սահմանմանը վերաբերող դրույթներ:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում կատարված փոփոխությունները ուղղված են եղել նաև վերահսկող մարմինների կողմից համախմբված (կոնսոլիդացված) վերահսկողություն իրականացնելու՝ բանկային վերահսկողության Բազելյան հիմնարար սկզբունքների ներդրմանը: Օրենքով տարանջատվել են ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց բնորոշումները, նրանց իրավունքներն ու պարտականությունները բանկերի համախմբված վերահսկողության համատեքստում: Օրենքի շրջանակներում սահմանվել են անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ստացման մեխանիզմներ:

Սահմանվել են բանկերի լուծարման ընթացակարգի առանձնահատկությունները: Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի լուծարման ընթացքում պետական վերահսկողությանը վերաբերող հարցերը, վերախմբագրվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկերի լուծարմանը վերաբերող գլուխը՝ բանկի պարտատերերի և բանկի ավանդատուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը ապահովելու, միջնորդության մակարդակը խորացնելու, համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու և ֆինանսական շուկայի հաճախորդների շահերը առավելագույնս պաշտպանելու նպատակով 2005 թվականի դեկտեմբերին կայացվել է միասնական վերահսկողական մարմին ստեղծելու մասին որոշում, ինչի արդյունքում ընդունվել է «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների փաթեթ:

«Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները ՀՀ կենտրոնական բանկին փոխանցելու հետ կապված միջոցառումները, այդ միջոցառումների իրագործման ընթացքում առաջացող հարաբերությունները, ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող մարմնի լիազորությունները: Օրենքում սահմանվել է, որ «ֆինանսական համակարգը» ֆինանսական համակարգի մասնակիցների մասնակցությամբ հարաբերությունների ամբողջություն է, իսկ այդ համակարգի մասնակիցներ են հանդիսանում ՀՀ տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձինք, արժեթղթերի շուկայի մասնակիցները, ներդրումային ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, կուտակային կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունները, ապահովագրական գործունեություն իրականացնողները, գրավատները: Համաձայն օրենքի՝ ֆինանսական համակարգի վերը հիշատակված մասնակիցների գործունեության լիցենզավորման, կարգավորման ու վերահսկողության իրականացման գործառույթներն անցել են ՀՀ կենտրոնական բանկին:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած թերությունների վերացման նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերին ընդունվել է ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքով նախատեսվել է, որ բանկերը հանդես են գալիս որպես արժութային գործակալներ և հաշվետու են ՀՀ կենտրոնական բանկին՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգով: Միևնույն ժամանակ, հստակեցվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

2005 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվող իրավական ակտերում:

Փոփոխվել են «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը և բանկային գործունեության լիցենզիայի միասնական ձևը:

Մասնավորապես՝ կատարվել են փոփոխություններ, որոնք հնարավորություն կընձեռեն առավել ամբողջական տեղեկատվության հիման վրա բացահայտել բանկի իրական սեփականատերերին: Այս նպատակով սահմանվել է բանկի նշանակալից մասնակիցներից պահանջվող տեղեկատվության առավել լայն շրջանակ:

Հստակեցվել է բանկերի կողմից որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը ղեկավարներին ներկայացնելու ընթացակարգը:

Ընդլայնվել են պահանջները բանկի (և բանկի մասնաճյուղերի) տնտեսական ծրագրերի նկատմամբ: Վերջինս հնարավորություն կտա բանկի (բանկի մասնաճյուղի) գործունեության առաջին իսկ օրերից ապահովել պատշաճ ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգեր:

Հաստատվել է «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցը»: Համաձայն ուղեցույցի՝ բանկի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման նպատակով սահմանվել են չափանիշներ, որոնց հիման վրա բանկի աշխատակիցը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից բանկի ղեկավար համարվել՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի:

Հաստատվել են «Իրավաբանական անձանց գործունեության ուղղությունները, ոլորտները կամ կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների կայացման կամ կիրառման վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց նշանակալից մասնակից հանդիսանալու չափանիշները», որոնց նպատակը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «բ» ենթակետի դրույթի կիրառման արդյունավետ և հստակ սահմանված հիմքեր ստեղծելն էր:

Կատարվել են փոփոխություններ և լրացումներ նաև «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում: Մասնավորապես՝ Կանոնակարգ 2-ը համապատասխանեցվել է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի պահանջին, այն է՝ ՀՀ տարածքում բանկերի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես ՀՀ դրամով:

Կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ («Ա», «Բ» և «Գ») ստացած կազմակերպությունների արժեթղթերը, այդ կազմակերպությունների նկատմամբ այլ պահանջները, ինչպես նաև այդ կազմակերպությունների երաշխավորությամբ պահանջները բանկերի կապիտալի համարժեքության հաշվարկում կընդգրկվեն 20% ռիսկի կշռով՝ «Ա» և «Բ» վարկանիշների դեպքում, և 50% ռիսկի կշռով՝ «Գ» վարկանիշի դեպքում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նախատեսում է օգտագործել «Ա», «Բ» և «Գ» վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթերը իր կողմից իրականացվող շուկայական գործառնություններում: Վերոնշյալ փոփոխությունները կնպաստեն ձեռնարկությունների թափանցիկության և հուսալիության բարձրացմանը՝ մեծացնելով բանկերի և իրական հատվածի համագործակցությունը:

Պայմանավորված ակնկալվող մեծածավալ արտարժութային ներհոսքի չեզոքացման խնդրով՝ փոփոխվել է ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նվազագույն չափի նորմատիվը՝ նախկին 6 տոկոսը փոխարինվել է 8 տոկոսով: Փոխվել է նաև նորմատիվի հաշվարկման կարգը՝ հայկական դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է հայկական դրամով, ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով ներգրավված միջոցների դիմաց՝ եվրոյով, իսկ մնացած այլ արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

Կատարվել են փոփոխություններ և լրացումներ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում՝ վերջինս Կանոնակարգ 2-ի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ

Բանկային համակարգում առկա ռիսկերը բացահայտելու և արագորեն կանխելու, բանկային համակարգի կայուն զարգացման ճանապարհին առկա խոչընդոտները հարթելու նպատակով Կենտրոնական բանկի Բանկային վերահսկողության վարչությունը իրականացնում է փաստաթղթային և տեղերում ստուգումներ:

2005 թվականի ընթացքում իրականացվել են 51 «տեղերում ստուգումներ»՝ 5 համալիր և 41 նպատակային ստուգումներ բանկերում և 4 համալիր և 1 նպատակային ստուգումներ վարկային կազմակերպություններում:

Բանկային համակարգի զարգացմանը և ռիսկերի նվազեցմանը ուղղված՝ Կենտրոնական բանկի կարևորագույն քաղաքականությունը 2005 թ. եղել է բանկերում կորպորատիվ կառավարման հիմնարար սկզբունքների ներդրումը: Այս առումով և՛ օրենսդրական փոփոխությունները, և՛ իրականացված վերահսկողությունը հիմնականում վերոնշյալ քաղաքականության իրագործման նպատակ են հետապնդել: Այսպես, բանկերում նպատակային ստուգումները հիմնականում ուղղված են եղել ԿԲ առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկի, այն է՝ բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման ներքո ներքին հսկողության համակարգերի թերությունների բացահայտմանը: 41 նպատակային ստուգումներից 25-ը կատարվել է «բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների կատարման, բանկի ռիսկերի կառավարման համակարգի» ուսումնասիրության նպատակով:

Տեղերում վերստուգումների արդյունավետությունը և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2003 թվական	2004 թվական	2005 թվական
Բանկային վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	39	41	44
Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	253.6 մլրդ դրամ	365.8 մլրդ դրամ	397.6 մլրդ դրամ
Բանկային վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	6.5 մլրդ դրամ	8.9 մլրդ դրամ	9.0 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	17	25	51
բանկերում համալիր ստուգում	7	5	5
բանկերում նպատակային ստուգում	10	17	41
վարկային կազմակերպություններում	-	3	5
Ստուգման մասնակիցների թիվը	42	94	149

Ստուգումների ընթացքում բանկային համակարգում արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են բանկերում ներքին հսկողության համակարգերի անկատարությանը և կորպորատիվ կառավարման սկզբունքների բացակայությանը: Վարկային կազմակերպություններում արձանագրված թերությունները գլխավորապես վերաբերում են հաշվապահական հաշվառման կանոնների խախտումներին, աշխատակիցների և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության և ներքին հսկողության համակարգերի անբավարար մակարդակին:

2005 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են նաև արտարժույթի փոխանակման կետերի ստուգումներ: Ստուգվել են 250 փոխանակման կետեր, որոնցից 71-ի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: 27 դեպքում խախտումների դիմաց պատժամիջոցները կարճվել են, իսկ 20 դեպքում փոխանակման կետերը տուգանք են վճարել:

Ըստ վերահսկողության արդյունքների՝ 2005 թվականին բանկային օրենսդրության խախտումներ են թույլ տվել 21 բանկեր (1848 խախտում) և 10 վարկային կազմակերպություններ (148 խախտում): Խախտումներից 101-ը կարճվել է, իսկ գերակշիռ մասի նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվել է նախազգուշացում:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2005 թ.

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ
Խախտման տեսակ		
Հաշվապահական հաշվառման	31	7
Ակտիվների դասակարգման	55	4
Օրենսդրական	485	6
Նորմատիվային	831	61
Հանձնարարականի չկատարում	30	4
Հաշվետվությունների ուշացում	6	8
Անարժանահավատ տվյալներ	148	38
Վարկային ռեգիստր	262	20
Պատժամիջոցներ		
Տուգանք բանկին/ վարկային կազմ.	347	6
Տուգանք ղեկավարին	241	15
Տույժ	3	
Նախազգուշացում	1165	105
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	3	
Չկիրառում	10	
Կարճում	79	22

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2005 թվականին ԿԲ առաջնային խնդիրներից է եղել բանկերում կորպորատիվ կառավարման, Բազելյան նոր սկզբունքների ներդրումը (նախնական փուլում բանկերին Բազել 2-ին ծանոթացնելը և այս հարցի շուրջ քննարկումները), ինչպես նաև ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովումը: Այս խնդիրները նախ և առաջ ենթադրում էին ԿԲ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների խորացմանն ուղղված քայլերի իրականացում: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական և բանկային համակարգի նորանոր զարգացումները կարող են բանկային համակարգի համար նոր ռիսկեր առաջացնել, ինչը կարևորում է գործող օրենքների և իրավական ակտերի մշտապես վերանայման գործընթացը: Այս առումով էական նշանակություն ունի բանկային վերահսկողների, իրավաբանների, մեթոդաբանների և վիճակագիրների մասնագիտական կատարելագործման գործընթացը:

2005 թվականին բանկային վերահսկողության աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման և միջազգային փորձին ծանոթանալու համար մասնակցել են վերահսկողության արդիական խնդիրներին վերաբերող մի շարք դասընթացների և կոնֆերանսների: Ուսուցանված և քննարկված հիմնական թեմաներն են՝ «Կորպորատիվ կառավարում», «Բանկային կարգավորում և վերահսկողություն», «Հիմնական վերահսկողական խնդիրներ», «Շուկայական ռիսկի վերլուծություն», «Ֆինանսական կայունություն», «Բանկային ռիսկերի գնահատում և վերահսկողություն», «Վարկային ռիսկի մոդելավորում», «Կապիտալի Բազելյան նոր համաձայնագիր (Բազել II)» և այլն:

Բանկային վերահսկողների վերապատրաստման գործում մեծ ներդրում է ունեցել ԱՄՆ Դաշնային պահուստային բանկի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված՝ «Ռիսկերի կառավարում և ներքին հսկողություն» թեմայով միջազգային սեմինարը, որին մասնակցել են ինչպես ՀՀ կենտրոնական բանկի, այնպես էլ օտարերկրյա կենտրոնական բանկերի ութ ներկայացուցիչներ: Տարվա ընթացքում Երևանում սեմինարներ են կազմակերպվել նաև Ֆրանսիայի բանկի կողմից՝ «Կորպորատիվ կառավարման իրավական ասպեկտները» թեմայով և Նիդեռլանդների բանկի կողմից՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» թեմայով:

Կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը ակտիվորեն օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Նիդեռլանդների, Շվեյցարիայի,

Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Լեհաստանի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Կադրերի վերապատրաստման թեմաները հիմնականում ներառել են բանկային վերահսկողության արդիական խնդիրներ՝ բանկերում ռիսկերի կառավարման ու գնահատման, վերահսկողական նոր մոտեցումների կիրառման, բանկերի նորմատիվային սահմանափակումների, Բազելյան նոր համաձայնագրի հիմնական դրույթների, փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի և ֆինանսական կայունության վերաբերյալ հարցերը:

Վարկային, շուկայական, գործառնական ռիսկերի գնահատման և կառավարման փորձը ուսումնասիրելու հնարավորություն են ընձեռել Միջազգային հաշվարկների բանկի, Ֆրանսիայի բանկի, Լեհաստանի բանկի, Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացները:

Կապիտալի Բազելյան նոր համաձայնագրի հետ կապված խնդիրներ են շոշափվել Նիդեռլանդների բանկի և Գերմանիայի Բունդեսբանկի կողմից կազմակերպված սեմինարների ժամանակ: Քննարկվել են Բազել - 2-ի հիմնական սկզբունքները, ռիսկերի սահմանափակման նոր մոտեցումները և նոր համաձայնագրի ներդրման հետ կապված դժվարությունները: Սեմինարների արդյունքները կիրառական նշանակություն ունեն հատկապես ռիսկերի վրա հիմնված վերահսկողության իրականացման տեսանկյունից: Այս առումով ՀՀ կենտրոնական բանկը 2006թ. նախատեսում է առևտրային բանկերի հետ համատեղ Բազելյան նոր համաձայնագրի ներդրման հեռանկարային ծրագրերի մշակման համար քննարկումներ կազմակերպել:

2005 թվականին միջպետական բանկային համագործակցության շրջանակներում Հայաստանում անց է կացվել Բազելյան կոմիտեի Անդրկովկասյան պետությունների, Կենտրոնական Ասիայի և Ռուսաստանի Դաշնության տարածաշրջանային խմբի կոնֆերանս, որտեղ քննարկվել են խմբի մասնակից երկրներում բանկային համակարգի զարգացումների, դրանց խնդիրների, լուծման ուղիների, բազելյան նոր համաձայնագրի ներդրման նպատակահարմարության և այլնի վերաբերյալ հարցեր:

Բանկային վերահսկողության արդյունավետության բարձրացման համար Կենտրոնական բանկի Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությունները բանկային վերահսկողության հիմնախնդիրների լուծման, վերահսկողական գործիքների կատարելագործման հնարավոր ուղիների բացահայտման նկատառումով մշտապես համագործակցում են այլ երկրների վերահսկողների հետ:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 բանկեր՝ 233 մասնաճյուղերով:

2005 թվականի առաջին եռամսյակի ընթացքում բանկային գործունեության լիցենզիա է ստացել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն: 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր (267 մասնաճյուղերով):

Այս տարի դարձյալ արձանագրվել է ՀՀ տնտեսությունում բանկային համակարգի մասնակցության շրջանակների ընդլայնում, ինչը վկայում են ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները. տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 19.8%-ը՝ վարկերը՝ 8.3%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 19.2%-ի, և 7.0%-ի փոխարեն:

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

2005 թվականին բանկային համակարգում արձանագրվել են կենտրոնացվածության մակարդակի նվազման որոշակի միտումներ, որի ապացույցներից է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի[2] կենտրոնացվածության գործակցի փոքրինչ նվազումը:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

	31.12.03	31.12.04	31.12.05
Ընդհանուր ակտիվներ	0.10	0.09	0.08
Ընդհանուր պարտավորություններ	0.12	0.10	0.09
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.06
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.09	0.09	0.08
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.09	0.11	0.10
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.23	0.18	0.17

[2] Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-ից 1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Վերջին տարիներին համեմատաբար ցածր է եղել կապիտալի և բարձր՝ դեպոզիտների կենտրոնացվածության գործակիցը:

Բանկային համակարգում կենտրոնացվածության մակարդակի նվազման հիմնական պատճառը խոշոր բանկերում մրցակցության մակարդակի փոքր-ինչ բարձրացումն է, իսկ խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը շարունակում է պահպանվել: Խոշոր և մանր բանկերի միջև հաշվետու տարում աճել է ժամկետային ավանդների բևեռացվածությունը. տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ժամկետային ավանդների 80%-ը, իսկ տարեվերջին՝ 88%-ը: Սակայն խոշորագույն 4 բանկերի բևեռացվածությունը համակարգում նվազել է. տարեվերջին դրանց բաժին է ընկել ակտիվների 47%-ը և պարտավորությունների 50%-ը (տարեսկզբին՝ համապատասխանաբար 49%-ը և 52%-ը):

Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)

	31.12.03	31.12.04	31.12.05
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	48	49	47
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	80	81	81
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	52	52	50
ԿԳ 10	82	84	85
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	28	32	35
ԿԳ 10	63	65	64
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	38	45	43
ԿԳ 10	82	85	85
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	47	51	51
ԿԳ 10	80	80	88
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ 4	65	60	64
ԿԳ 10	85	86	86

Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները


2005 թվականի ընթացքում բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 46.6%-ով (30.1 մլրդ դրամով) և կազմել 94.8 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել է բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամի աննախադեպ աճը:

Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամն ավելացել է 20.2 մլրդ դրամով, գլխավոր պահուստը՝ 1.3 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճ է արձանագրվել 14 բանկերում, ընդ որում՝ ի հաշիվ և՛ ներքին, և՛ արտաքին աղբյուրների: Ոչ ռեզիդենտների մասնակցության տեսակարար կշիռը բանկերի կանոնադրական հիմնադրամում ավելացել է ընդամենը 0.2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 52.8%: Կանոնադրական հիմնադրամի աճին որոշ չափով նպաստել է նաև 2005թ. հուլիսի 1-ից 2.4 մլրդ դրամ ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի ապահովման պահանջը, քանի որ հինգ բանկեր կանոնադրական կապիտալի չհամալրման դեպքում կկանգնեին վերոնշյալ պահանջի բավարարման խնդրի առջև:

Հաշվետու տարում համակարգն ապահովել է 12.0 մլրդ դրամի չափով շահույթ: Տարվա ընթացքում վեց բանկեր նախորդ ժամանակաշրջանի շահույթից բաշխել են շահաբաժիններ՝ ընդհանուր 2.9 մլրդ դրամի չափով:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ, 2. Գլխավոր պահուստ
3. Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ

Համակարգի ընդհանուր կապիտալը, ընդհանուր ակտիվների համեմատությամբ, տարվա ընթացքում դրսևորել է առաջանցիկ աճի տեմպ, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը (լևերեջի գործակիցը) տարվա ընթացքում ավելացել է 3.7 տոկոսային կետով և 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 21.5%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումների աճը զիջել է ընդհանուր կապիտալի աճը, որը պայմանավորել է ընդհանուր և հիմնական նորմատիվային կապիտալների առաջանցիկ աճը ռիսկով կշռված ակտիվների աճի համեմատ: Նշվածը հանգեցրել է տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր և հիմնական կապիտալների համարժեքության ցուցանիշների աճի. ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշն աճել է 1.3, իսկ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.4 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 33.7% և 31.7%: ՀՀ տարածքում գործող բանկերի համարժեքության ցուցանիշները բավականաչափ գերազանցում են նորմատիվների՝ պահանջվող 12% և 8% մակարդակները:

Գծապատկեր 2. Ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի



Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ կազմակերպա-իրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 21 առևտրային բանկերից 1-ը կոոպերատիվ բանկ է, 2-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ, 2-ը՝ բաց բաժնետիրական, 16-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ:


Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ (բաժնետերեր, փայատերեր) են 1614 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 57-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք 2 բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող բանկերը, ապա 19 բանկերի մասնակիցները 87 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 24-ը՝ ոչ ռեզիդենտներ: Չորս բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (երկու ռեզիդենտ իրավաբանական անձինք, մեկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ յոթ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցների աճի միտումները

2005 թ. ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 15.7%-ով (47.0 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 345.9 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը մեծապես պայմանավորվել է դրամային պարտավորությունների զգալի աճով: Դրամով պարտավորություններն ավելացել են 44.2%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 5.4%-ով, ինչի արդյունքում դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը 6.6 տոկոսային կետով աճելով՝ տարեվերջին կազմել է 33.3%: Այսպես, չնայած արձանագրվել է դոլարայնացման մակարդակի նշանակալի նվազում, այնուամենայնիվ այն դեռևս բավականին բարձր մակարդակի վրա է:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի պարտավորությունների աճի միտումները



Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների աճի հաշվին:

Պարտավորությունների կազմում 2005 թվականին զգալի ավելացել են նաև բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունները՝ 31.6%-ով (7.3 մլրդ դրամով), իսկ բանկերի լորո թղթակցային հաշիվները նվազել են 17.4%-ով (1.0 մլրդ դրամով): Տարեվերջին լորո հաշիվների 62%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին, ընդ որում՝ լորո թղթակցային հաշիվների 90%-ից ավելին բաժին է ընկել Ռուսաստանում և Իրանում գործող բանկերին: Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները ավելացել են 30.3%-ով (1.9 մլրդ դրամով):


Տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր միջոցներն ավելացել են 15.1%-ով (34.4 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 261.3 մլրդ դրամ:

Նախորդ տարվա համեմատ 2005 թվականին բանկային համակարգում դրսևորված առանձնահատկություններից է այն, որ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր ավանդների աճն ամբողջությամբ ապահովվել է ի հաշիվ դրամային ավանդների. դրամային ավանդներն աճել են 70.9%-ով (34.9 մլրդ դրամով), իսկ արտարժութային ավանդները նվազել են 0.3%-ով (0.5 մլրդ դրամով): Նշվածին նպաստել են նաև ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ արտարժութային բանկային ավանդի երաշխավորված չափը 1 միլիոն ՀՀ դրամ է, իսկ դրամով բանկային ավանդի երաշխավորված չափը՝ 2 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու տարում իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններն ավելացել են 14.6%-ով, որին նպաստել է ինչպես իրավաբանական անձ-հաճախորդների քանակի ավելացումը, այնպես էլ առանձին հաճախորդների հաշիվների խոշորացումը. իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 9%-ով, իսկ վերջիններիս ընթացիկ հաշիվները՝ 12%-ով (5.4 հազարով):


Չնայած տարվա ընթացքում ֆիզիկական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 47%-ով, իսկ վերջիններիս հաշիվների քանակը՝ 78%-ով, սակայն ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունները նվազել են 4.1%-ով:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ցպահանջ ավանդների աճի միտումները



Ե՛վ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների՝ համապատասխանաբար 29.1% և 25.8% աճը գերազանցել է դրանց քանակական աճը. և՛ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվները, և՛ իրավաբանական անձանց ժամկետային հաշիվները աճել են 17%-ով: Սա վկայում է, որ բանկային համակարգի ժամկետային ավանդների ծավալները տարվա ընթացքում դրսևորել են խոշորացման միտումներ:


Գծապատկեր 5. Բանկային համակարգի ժամկետային ավանդների աճի միտումները



Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 92.3%՝ (նախորդ տարի՝ 91.4%): Ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել է 48.4%: Սա պայմանավորված է այն փաստով, որ տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունների աճի տեմպը (7.0% աճ) զգալի զիջել է ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը (15.7% աճ): Արդյունքում՝ տարեվերջին ընդհանուր պարտավորությունների կազմում ցպահանջ պարտավորությունների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) տեսակարար կշիռը նվազել է 3.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային պարտավորություններ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Համակարգի ընդհանուր պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունը կազմում է մոտ կես տարի: Ներգրաված միջոցների 47%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 41%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 12%-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ:

Առևտրային բանկերի հաճախորդները

2005 թվականի ընթացքում բանկային համակարգի կողմից սպասարկվող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակն ավելացել է 44.3%-ով կամ 215.5 հազարով (գրեթե ամբողջությամբ ֆիզիկական անձանց աճի հաշվին) և տարեվերջին կազմել 702.5 հազար: Սպասարկվող ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 666.1 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 36.4 հազար:


Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 69.5%-ով և կազմել 853.0 հազար, որի 97%-ը՝ ընթացիկ և 3%-ը ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 71.7%-ով կամ 346.5 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 829.4 հազար: Ժամկետային հաշիվների քանակը նվազել է 17.2%-ով կամ 3.5 հազարով (հիմնականում ի հաշիվ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների աճի) և տարեվերջին կազմել 23.6 հազար:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների աճի միտումները


2005 թվականին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 21.2%-ով (77.1 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 440.7 մլրդ դրամ:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միտումները



Հաշվետու տարում ընդհանուր ակտիվների կազմում զգալի ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը և պետական պարտատոմսերում ներդրումները:

Գծապատկեր 8. Բանկային համակարգի ակտիվների աճի միտումները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Թղթակցային հաշիվների 96.0%-ը տեղաբաշխված է ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 96.7%-ը): Հատկանշական է, որ եթե նախորդ տարի ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 68%-ը ներդրված էր բարձրակարգ վարկանիշ ունեցող ԱՄՆ բանկերում, ապա 31.12.2005 թ. դրությամբ ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի ընդամենը 37%-ը, եվրոպական բանկերում՝ 50%-ը, Ռուսաստանի բանկերում՝ 5%-ը և այլ երկրների բանկերում՝ 8%-ը:

Պետական արժեթղթերում ներդրումների ծավալներն ավելացել են 79.2%-ով կամ 29.0 մլրդ դրամով և տարեվերջին կազմել են 65.6 մլրդ դրամ: 2005 թվականի վերջին պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 3.74%, պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 5.09%, որոնք տարեսկզբի նկատմամբ նվազել են համապատասխանաբար 0.57 տոկոսային կետով և 0.86 տոկոսային կետով: Հատկանշական է, որ նույնիսկ տոկոսադրույքների նման նվազման դեպքում բանկային համակարգում արձանագրվել է պետական պարտատոմսերում ներդրումների աճ: Սա հիմնականում պայմանավորվել է, զգալի ցպահանջ պարտավորությունների առկայության պայմաններում, բարձր իրացվելի ակտիվների՝ անհրաժեշտ բավարար մակարդակի ապահովման նկատառումով:


Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները նվազել են 3.0 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 1.0 մլրդ դրամ:

Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում աճել են 13.9%-ով և տարեվերջին կազմել 25.0 մլրդ դրամ, որը ընդհանուր կապիտալի 26.4%-ն է և ընդհանուր ակտիվների 5.7%-ը: Բոլոր բանկերում հիմնական միջոցների մեծությունը զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է այն մասին, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերված ի հաշիվ փոխառու միջոցների: Այս առումով 2005 թվականի հուլիսի 1-ից նորմատիվային հաշվարկներում կատարվել է խստացում. նորմատիվային կապիտալի մեծության հաշվարկում հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով նվազեցվում է բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների մեծությունը:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

Բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում տարեվերջին կազմել է 73.6% (նախորդ տարի՝ 75.2%), ընդ որում, եթե բացառենք ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվները, ապա մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կկազմի 64.5% (նախորդ տարի՝ 58.1%): Այսպես, տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունների նվազ աճի պայմաններում բանկերը գերադասել են ակտիվները ներդնել տնտեսության վարկերում և պետական պարտատոմսերում:

Գծապատկեր 9. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Պահանջներ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 7. Հիմնական միջոցներ, 8. Այլ արժեթղթեր, 9. Լիզինգ, ֆակտորինգ, 10. Այլ ակտիվներ

Տարվա ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերի և պետական պարտատոմսերում կատարված ներդրումների աճի տեմպերը զգալի գերազանցել են ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որը հանգեցրել է ակտիվների կազմում վարկերի տեսակարար կշռի 5.4 և պետական պարտատոմսերում ներդրումների 4.8 տոկոսային կետով աճի:

Համակարգի ընդհանուր ակտիվների միջին կշռված ժամկետայնությունը տատանվում է կես տարուց մեկ տարվա շրջանակներում: Տեղաբաշխված միջոցների 30%-ը ցպահանջ է, 32%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 38%-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ:

Բանկային համակարգի վարկային ներդրումները

Տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումներն[3] ավելացել են 33.7%-ով (52.4 մլրդ դրամով) և կազմել 208.1 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 64.0%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 20.9%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 6.7 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 36.3%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները աճել են 23.3%-ով և կազմել 19.6 մլրդ դրամ:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 34.9%-ով (48.7 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 188.5 մլրդ դրամ:


Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարի, տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ (արդյունաբերության ճյուղերը դիտարկվել են որպես մեկ համընդհանուր ճյուղ): 2005 թվականին դարձյալ սպառողական վարկերը շարունակել են դրսևորել առանձնահատուկ աճի միտումներ. ավելացել են 57.6%-ով (22.6 մլրդ դրամով): Վարկավորման զգալի աճ է արձանագրվել նաև առևտրի ճյուղում՝ 35.4% (11.0 մլրդ դրամով), արդյունաբերության ճյուղում՝ 9.8% (3.5 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 65.1% (3.4 մլրդ դրամով): Արդյունաբերության ճյուղում վարկավորման ծավալների մեծ աճ է գրանցվել էներգետիկայի, քիմիական, սննդի և շինանյութերի արդյունաբերությունում:

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2005 թվականին դարձյալ արձանագրվել է սպառողական վարկերի տեսակարար կշռի աճ: Բանկային համակարգի վարկային ներդրումների կառուցվածքը ներկայացնող գրաֆիկից ակնհայտ է, որ վարկերը մեծամասամբ կենտրոնացված են սպառողական, առևտրի ոլորտներում և արդյունաբերության ճյուղում:

---

[3] Վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և բանկերում տեղաբաշխված վարկերն ու ավանդները:

Գծապատկեր 10. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Այլ ճյուղեր

Քանի որ տարեսկզբին վարկային ներդրումներում ամենաբարձր տեսակարար կշիռն ունեցել են սպառողական վարկերը և տարվա ընթացքում դրսևորել են արագատեմպ աճի միտումներ, ապա ըստ տնտեսության ճյուղերի համակարգի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը, ի հաշիվ սպառողական վարկերի, նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ ավելացել է՝ 0.06-ով և կազմել 0.21, ինչը, սակայն, համարվում է ցածր և վկայում է նվազ կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, նախորդ տարվա համեմատ ավելացել է դարձյալ 0.06-ով և կազմել 0.32, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի:

Տնտեսության ներկայիս զարգացման պայմաններում նկատվում է երկարաժամկետ վարկերի մեծ պահանջարկ: Հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը բավականաչափ աճել է (9.0 տոկոսային կետով) և կազմել 56.4%: Բանկային համակարգում դեռևս նկատվում է «երկար փողերի» սղություն, որը երկարաժամկետ վարկեր տրամադրելու կարևորագույն նախապայմանն է: Երկարաժամկետ միջոցների սղության հիմնական պատճառը «երկար» փող ստեղծող ինստիտուտների բացակայությունն է հանրապետությունում, ինչպիսիք են՝ մասնավոր կենսաթոշակային հիմնադրամները ու ապահովագրական գործի կայացած ոլորտը:

Տնտեսության երկարաժամկետ վարկավորման գործընթացին էապես նպաստում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը: ՀՀ տարածքում գործող 6 բանկեր սպասարկում են Համաշխարհային բանկի ձեռնարկությունների զարգացման, Գերմանա-հայկական հիմնադրամի, Իզմիրլյան-Եվրասիա հիմնադրամի փոքր բիզնեսի վարկավորման, Համաշխարհային բանկի գյուղատնտեսության բարեփոխումների աջակցման, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ԳՕՕ (Հյուսիս-Արևմտյան գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր), Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Համաշխարհային բանկի միկրո և փոքր բիզնեսի և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային ծրագրերը: Այդ ծրագրերն ընդգրկում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները՝ 31.12.2005թ. դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսացել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 43.8%-ը, գյուղատնտեսությունը՝ 17.2%-ը և սպասարկման ոլորտը՝ 9.5%-ը:

Նշված ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը տարեվերջին կազմել են 24.9 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկերի 13.2%-ը: Այս վարկերի վերադարձելիության աստիճանն անհամեմատ բարձր է, ինչի մասին է վկայում ժամկետանց վարկերի 0.3% կշիռը: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի մոտ 67.8%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 26.0%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 6.2%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով:


Վարկային պորտֆելի որակը

2005 թվականին, ինչպես և նախորդ տարի, դարձյալ արձանագրվել է բանկային համակարգի վարկային պորտֆելի որակի բարելավում:

Տարվա ընթացքում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) մեծությունը աճել է 2.0%-ով և կազմել է 4.3 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը՝ 7.9%-ով և կազմել է 259.5 մլրդ դրամ: Արդյունքում՝ ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռն աճել է 0.1 տոկոսային կետով և կազմել 98.4%:

Տարեվերջին չաշխատող ակտիվների 4.6%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 95.4%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել շինարարության ճյուղին տրամադրած վարկերում՝ 6.9%, և ցածր՝ տրանսպորտի և կապի ճյուղում՝ 0.3%:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի չաշխատող ակտիվների աճի միտումները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բանկային համակարգի եկամտաբերությունը

Հաշվետու տարում բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 12.0 մլրդ դրամ:

Տարվա ընթացքում շահույթով աշխատել է 17 բանկ, իսկ վնասով՝ 4 բանկ: Տարին շահույթով եզրափակած բանկերի չբաշխված շահույթը կազմել է 13.5 մլրդ դրամ, վնասով եզրափակած բանկերի ընդհանուր վնասը՝ 1.5 մլրդ դրամ:


Չնայած նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նվազել են, այնուամենայնիվ 2005 թվականին բանկային համակարգը դարձյալ ապահովել է շահութաբերության բավականին բարձր մակարդակ. բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (չբաշխված շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.0%, իսկ ըստ կապիտալի (չբաշխված շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 15.3%: Նույն ցուցանիշները 2004 թվականին[4] համապատասխանաբար կազմել են 3.2% և 18.4%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[5] հաշվետու տարում կազմել է 4.3% (նախորդ տարի՝ 4.5%):

---

[4] Առավել իրատեսական և համադրելի պատկերացում կազմելու նպատակով 2004թ. համակարգի շահութաբերությունը ներկայացված է ըստ 19 բանկերի ցուցանիշների (առանց «Հայկապ բանկի»), քանի որ «Հայկապ բանկի» շահույթը ձևավորվել էր խոշոր վերադարձների հաշվին:

[5] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:

Գծապատկեր 12. Շահութաբերության ցուցանիշները՝ ըստ 17 շահութաբեր բանկերի



Շահութաբեր 17 բանկերի շահույթի Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.007-ով և կազմել 0.12 միավոր, որը բնութագրում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության փոքր-ինչ նվազումը:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը

2005 թ. բանկային համակարգի չբաշխված շահույթը գերազանցել է նախորդ տարվա համակարգի[6] շահույթը 16.5%-ով (1.7 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորվել է վարկերի արագատեմպ աճի արդյունքում տոկոսային եկամուտների զգալի աճով: 2005 թվականին առևտրային բանկերը շարունակել են ակտիվ գործունեություն իրականացնել վարկային շուկայում, որտեղ բավականաչափ մեծացել է նաև միջբանկային մրցակցությունը: Վարկերի զգալի աճը չի հանգեցրել վարկերի որակի վատթարացման, ինչը վկայում է, որ վերջին տարիներին էապես բարձրացել է վարկերի կառավարման մակարդակը:

Այսպես, նախորդ տարվա համեմատ, բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած տոկոսային եկամուտների 29.3% (6.0 մլրդ դրամով) աճով: Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում ավելացել է 4.6 տոկոսային կետով և կազմել 80.6%:

---

[6] Առավել իրատեսական և համադրելի պատկերացում կազմելու նպատակով համակարգի 2004 թվականի ծախսերի և եկամուտների կառուցվածքը ներկայացված է ըստ 19 բանկերի ցուցանիշների (առանց «Հայկապ բանկի»):

Ոչ տոկոսային եկամուտների կազմում այս տարի դարձյալ բավականին ավելացել են արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները՝ 64.1%-ով (2.4 մլրդ դրամով): Բանկային համակարգի միջնորդավճարներից ստացված եկամուտները, 2004 թվականի համեմատ, ավելացել են 28.8%-ով կամ 2.2 մլրդ դրամով՝ պայմանավորված փոխանցումների ծավալների զգալի աճով:

Տոկոսային ծախսերում 56.4% տեսակարար կշիռ ունեցող ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 21.2%-ով (1.0 մլրդ դրամով):


Ոչ տոկոսային ծախսերում 37.5% տեսակարար կշիռ կազմող «Հաշվեգրված աշխատավարձ և դրան հավասարեցված միջոցներ» հոդվածով ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 34.7%-ով (2.7 մլրդ դրամով), իսկ բանկային համակարգի աշխատողների թվաքանակն ավելացել է 14%-ով: Նշվածը վկայում է, որ տարվա ընթացքում, ինչպես և 2004 թվականին, արձանագրվել է բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացում:

Ընդհանրացնելով նշենք, որ, նախորդ տարվա համեմատ, 2005 թվականին համախառն եկամուտներն ավելացել են 30.2%-ով (17.4 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 34.0%-ով (15.1 մլրդ դրամով):

Համախառն եկամուտների կազմում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային եկամուտներն ավելացել են 21.9%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 43.5%-ով և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը՝ 31.8%-ով:


Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 24.4%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 39.2%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները՝ 32.6%-ով:

Գծապատկեր 13. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում փոքր-ինչ աճել են ոչ տոկոսային եկամտի, իսկ համախառն ծախսերում՝ ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 14. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով իրականացվող վճարումների ծավալն ավելացել է 38.6%-ով և կազմել 4872 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ տարածքում անկանխիկ վճարումները հիմնականում իրականացվել են կրեդիտային վճարային գործիքներով՝ ծավալի 99.7%-ը, քանակի 99.4%-ը (այդ թվում՝ վճարային գործիքների ծավալի 56.3%-ը և քանակի 63.7%-ը կազմել են էլեկտրոնային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականները): Դեբետային գործիքներով կատարված վճարումների ծավալը կազմել է ընդհանուր վճարումների 0.3%-ը, իսկ քանակը՝ 0.6%-ը:

2005 թվականի վերջի դրությամբ պլաստիկ քարտերի թողարկումը և սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 18 առևտրային բանկերի կողմից: Այդ թվում՝ 16 առևտրային բանկեր թողարկել և սպասարկել են «Արքա» միասնական վճարային համակարգի քարտեր: Հաշվետու տարվա ընթացքում «ԱրՔա» համակարգին անդամակցող բանկերի քանակն ավելացել է երեքով (Պրոմեթեյ բանկ, Կասկադ բանկ, «ԲՏԱ ինվեստ» բանկ):

Բանկային համակարգի կողմից տրամադրված քարտերի քանակը 2005 թվականին ավելացել է 26.0%-ով և կազմել 137.2 հազար: «ԱրՔա» պլաստիկ քարտերի քանակն ավելացել է 18.0%-ով, «Visa» միջազգային քարտերի քանակը՝ 37.3%-ով, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 96.5%-ով: Սպասարկվող քարտերի 41%-ը «ԱրՔա» քարտերն են, 46%-ը՝ «VISA» քարտերը և 13%-ը՝ «MasterCard» և այլ միջազգային քարտերը, որտեղ ընդգրկված են նաև HSBC debit քարտերը: Տարեվերջին շրջանառությունում եղել են 55.7 հազար՝ «ԱրՔա», 62.8 հազար՝ «VISA», 5.9 հազար՝ «MasterCard» և 12.7 հազար միջազգային այլ քարտեր: ՀՀ տարածքում գործող 15 առևտրային բանկեր իրականացրել են պլաստիկ քարտերի թողարկում և սպասարկում:

2005 թվականի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների ծավալում «ԱրՔա» քարտերի միջոցով իրականացվել է 1.0 մլն գործառնություն՝ մոտ 27.8 մլրդ դրամ ծավալով, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 47.2%-ով (8.9 մլրդ դրամով): Visa միջազգային քարտերով իրականացվել է 39.6 մլրդ դրամ ծավալով 692.1 հազար գործառնություն, MasterCard միջազգային քարտերով՝ 7.7 մլրդ դրամ ծավալով 89.9 հազար գործառնություն: Նախորդ տարվա համեմատ Visa միջազգային քարտերով իրականացված գործառնությունների ծավալն ավելացել է 29.2%-ով, իսկ MasterCard միջազգային քարտերով գործառնությունների ծավալը նվազել է 15.9%-ով:

Նպատակ ունենալով նվազեցնել ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով կանխիկացման գործառնությունների ժամանակ առաջացող ռիսկերը՝ 2005 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել են ԱԳՄ-ների տեղադրման և շահագործման հետ կապված լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև սահմանափակվել է ԱԳՄ-ների միջոցով կանխիկ արտարժույթի տրամադրումը: Հատկանշական է, սակայն, որ ՀՀ տարածքում քարտերով իրականացվող անկանխիկ վճարումներից օգտվելու սովորույթը դեռևս թույլ է զարգացած. քարտերով իրականացված գործառնությունների ընդամենը 8%-ն է բաժին ընկնում անկանխիկ գործառնություններին, իսկ 92%-ը բաժին է ընկնում քարտերով իրականացված կանխիկացումներին:

Զարգացնելով քարտերով իրականացվող գործառնությունների շրջանակը՝ առևտրային բանկերի կողմից իրենց քարտային հաճախորդներին 2005 թվականի օգոստոսից հնարավորություն է տրվել ինտերնետի միջոցով իրականացնել քարտից-քարտ փոխանցումներ, որի ընդհանուր ծավալը տարեվերջին կազմել է 7.5 մլն դրամ: Իսկ էլեկտրոնային առևտրում (e-commerce) ընդգրկված առևտրի կետերի միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մոտ 70 մլն դրամի գործառնություն:

WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, BISTRAYA POCHTA և այլ համակարգերով Հայաստանի Հանրապետությունից կատարված փոխանցումների ընդհանուր ծավալը 2004 թվականի համեմատ ավելացել է 12.1%՝ կազմելով 32.6 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 25.9%-ով՝ կազմելով 50.7 հազար: Հայաստանի Հանրապետություն կատարված

փոխանցումները ընդհանուր առմամբ ավելացել են՝ ծավալը 28.6%-ով (ստացումների ընդհանուր ծավալը կազմել է 244.2 մլրդ դրամ), իսկ քանակը 34.3%-ով (ստացումների ընդհանուր քանակը կազմել է 971.6 հազար): Հաշվետու ժամանակահատվածում այդ համակարգերով ստացումներում գերակշռում են UNISTREAM-ով փոխանցումները՝ կազմելով ընդհանուր ծավալի 39.0%-ը և ընդհանուր քանակի 29.9%-ը: Առանձնանում են նաև WESTERN UNION և ANELIK համակարգերով ստացումները, որոնք կազմել են ընդհանուր ծավալի համապատասխանաբար 16.8%-ը և 15.5%-ը (ընդհանուր քանակի՝ 19.9%-ը և 23.6%-ը): Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ընդհանուր ծավալի մոտ 2.2%-ը կազմել են MONEY GRAM համակարգով փոխանցումները (քանակը՝ 2.7%-ը), իսկ BISTRAYA POCHTA և այլ համակարգերով փոխանցումների ծավալը կազմել է 26.4%-ը (քանակը՝ 24.0%-ը):

2005 թ. դրությամբ SWIFT-ին անդամակցում են ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկեր, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը: Տարվա ընթացքում SWIFT-ի միջոցով Հայաստանի Հանրապետություն իրականացված փոխանցումները նախորդ տարվա համեմատ նվազել են՝ ծավալը՝ 2%-ով, իսկ քանակը՝ 6.5%-ով: Փոխանցումները արտասահման նախորդ տարվա համեմատ ավելացել են՝ ծավալը՝ 3%-ով իսկ քանակը՝ 33%-ով:

Առևտրային բանկերի կողմից միջազգային փոխանցումներ են կատարվել նաև TELEX-ի, FAX-ի միջոցով: Այդ միջոցներով արտասահման փոխանցումների ծավալը կազմել է շուրջ 29.6 մլրդ դրամ (քանակը՝ 1.7 հազար), իսկ արտասահմանից ստացումների ծավալը՝ շուրջ 21.4 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 1.6 հազար):

ՀՀ տարածքում գործող որոշ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին մատուցվում են ծառայություններ բանկային հեռահար սպասարկման համակարգերի (PC banking, Internet- banking, Telebanking՝ mobile phone, Home-banking) միջոցով: Այս համակարգերը հաճախորդներին հնարավորություն են տալիս ստանալու տեղեկատվություն իրենց հաշվի վիճակի մասին, ինչպես նաև իրականացնելու իրենց հաշվի կառավարում՝ ներկայացնելով բանկին հանձնարարականներ:

2005 թվականի ընթացքում բանկային հեռահար սպասարկման համակարգերի միջոցով հաճախորդների իրականացրած վճարումների ծավալը կազմել է 321.8 մլրդ դրամ (քանակը՝ 50.9 հազար): 2004 թվականի համեմատ այս եղանակով կատարված վճարումների ծավալը ավելացել է 1.3 անգամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայումս ՀՀ բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի գնահատումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք գտնվում են կառավարելի շրջանակներում:

Վարկային ռիսկ

Ֆինանսական ռիսկերից մշտապես կարևորվել է վարկային ռիսկի կառավարումը: Վերջին տարիներին դրսևորվել են վարկային ռիսկի նվազման միտումներ, ինչը պահպանվել է նաև 2005 թվականին: Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքում դասակարգված վարկերի և դեբիտորական պարտքերի (այսուհետ՝ չաշխատող ակտիվների) տեսակարար կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 1.6%: Չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 5.0%-ը (նախորդ տարի՝ 7.3%): Եթե չաշխատող ակտիվների 4.2 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 0.7 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 4.2%-ը:

Բանկային վերահսկողության արդյունքների մասին կարելի է դատել՝ համադրելով բանկային համակարգի ակտիվների (մասնավորապես վարկերի) աճի տեմպը ակտիվների որակի փոփոխությունների հետ: Այսպես, վերջին երկու տարիներին ակտիվների միջին աճը կազմել է 25%, իսկ վարկերինը՝ 39%, այնուամենայնիվ դա չի հանգեցրել ակտիվների որակի վատացման: Ինչպես նշվեց, վերջին երկու տարիներին չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 1.6%, որի մեծ մասը հսկվող դասի ակտիվներն են: Որպես հետևանք՝ տարվա ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.3%, և, չնայած վարկերի դինամիկ աճին, ակտիվների վերադարձելիության աստիճանը մնում է բավականին բարձր՝ 99.7%: Այս ցուցանիշները բավականին ցածր են այլ երկրների բանկային համակարգերի նույն ցուցանիշների համեմատ՝ վկայելով ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկի համեմատաբար ցածր մակարդակի մասին: Համեմատության համար նշենք նաև, որ Եվրոգոտու երկրներում բանկերի «ընդամենը պահուստավորում / եկամտաբեր ակտիվներ» ցուցանիշը կազմել է 1.95%, իսկ ՀՀ բանկային համակարգում՝ 0.88%:

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշն ունի ընդունելի մակարդակ՝ 31.12.2005 թ. դրությամբ կազմել է նորմատիվային կապիտալի 16.4%-ը (առավելագույնը՝ 20%), խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 117% (առավելագույնը՝ 500%), բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 3.0%-ը (առավելագույնը՝ 5%), բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 7.4%-ը (առավելագույնը՝ 20%): Վիճակագրական ցուցանիշները բնութագրում են բանկային համակարգի վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացումը, ինչին նպաստում է նաև վարկային ռեգիստրի գործունեությունը, որի միջոցով բանկերը նախապես տեղեկացվում են վարկառուի վարկային պատմությանը:

Արտարժութային ռիսկ

Հաշվետու տարում դարձյալ դրսևորվել են ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի բավականին մեծ տատանումներ: 2005 թվականին արձանագրել է ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 16.6% միջին տարեկան արժևորում, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 7.9%:

2005 թվականին ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է ընդհանուր 395 մլն դրամ վնաս՝ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.5%-ը (նախորդ տարի վնասը կազմել է կապիտալի 0.7%-ը): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնասներ է ունեցել 13 բանկ, իսկ եկամուտ՝ 8 բանկ: Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում ապահովել է 6.0 մլրդ դրամ եկամուտ (2004 թվականի համեմատ ավելացել է 64%-ով): Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի համախառն արտարժութային դիրքը կազմել է 4.9%, իսկ երկրորդ խմբի բաց դիրքը՝ 1.0%՝ համապատասխանաբար պահանջվող առավելագույնը 15% և 5% նորմատիվային մակարդակների դեպքում:

Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2006 թվականին դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն կարող գերազանցել 107 մլն դրամի սահմանաչափը: Նշված գնահատման շեղման մեծությունը փաստացի մակարդակից կախված է 2006 թվականի ընթացքում արտարժութային բաց դիրքերի փոփոխությունների աստիճանից, քանի որ հաշվարկների հիմքում ընկած են 31.12.2005 թ. դրությամբ բանկերի կողմից ներկայացված արտարժութային բաց դիրքերը: Արտարժութային ռիսկի զսպման նկատառումով 2005 թվականին նորմատիվային դաշտում կատարվել է խստացում. 2005 թ. հոկտեմբերի 1-ից բանկի առաջին արտարժութային խմբի համախառն դիրքի և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի 15%-ը, իսկ ըստ առանձին արժույթների՝ բաց դիրքը չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի 10%-ը:

Իրացվելիության ռիսկ

Չնայած տարվա ընթացքում վարկային ներդրումների աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, այնուամենայնիվ բանկային համակարգի իրացվելիության ռիսկը շարունակում է ցածր մնալ, քանի որ բանկային համակարգը դեռևս ունի բարձր իրացվելի ակտիվների զգալի ծավալ՝ 184.2 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ակտիվների 42%-ը: 2005 թվականին բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը նվազելով 2.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 44.2%, ընթացիկ իրացվե-

լիության ցուցանիշը աճելով 11.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 110.5%: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բավականին բարձր են և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն ներկայացնում: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ըստ մարմանը մնացած ժամկետայնության խմբերի՝ բանկային համակարգի ակտիվների ծավալները 2006թ. կգերազանցեն պարտավորությունների մեծությունները, ըստ որի՝ կանխատեսվում է, որ այլ հավասար պայմաններում 2006 թվականին բանկային համակարգը զերծ կմնա իրացվելիության ռիսկով պայմանավորված այլընտրանքային վնասներից:

Իրացվելիության տեսանկյունից դիտարկելով բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքը հատկանշական է, որ 2005 թվականին արձանագրվել է պարտավորությունների համակենտրոնացման աստիճանի նվազում: «Խոշոր» պարտավորությունների[7] տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում փոքր-ինչ նվազել է և կազմել է 27.1%:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը ՀՀ բանկային համակարգում ներկայումս ևս բավականին ցածր է:

Գնային ռիսկի տեսանկյունից հատկանշական է, որ համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից իրականացված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուր կապիտալի ընդամենը 1%-ը, և արժեթղթերի գների տատանումների հետևանքով բանկային համակարգը էական վնասներ չի կրի: Այսպես, ոչ պետական ռիսկային արժեթղթերում կատարված ներդրումների ծավալը տարեվերջին կազմել է 1.0 մլրդ դրամ, որի գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի նորմատիվային կապիտալի 0.1 %-ը:

Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չեն հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի նորմատիվային կապիտալի 3.0%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 25.0 մլրդ դրամ, իսկ սեփականություն հանդիսացող բռնագանձված անշարժ գույքի մեծությունը՝ 1.0 մլրդ դրամ: Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա: Ըստ ստրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[8] 50%-ի չվերադարձման արդյունքում բանկային համակարգի վնասը կկազմի 9%:

---

[7] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

[8] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում ևս զսպված է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը երկար չէ, որը տոկոսադրույքները հաճախակի վերանայելու հնարավորություն է ստեղծում՝ հետևելով շուկայական փոփոխություններին: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքի ռիսկի գնահատման դյուրացիայի մեթոդիկայով կատարված գնահատումները ցույց են տալիս, որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունների ճեղքվածքը փոքր մեծություն է. դրական մեծություն (մոտ կես տարի), ինչը վկայում է, որ շուկայական տոկոսադրույքների համամասնորեն տատանումները զգալի ազդեցություն չեն թողնի բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Հաշվարկները վկայում են, որ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 1%-ով նվազման դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կավելանա 780 մլն դրամով:

Բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները 2005 թ. գերազանցել են նախորդ տարվա նույն մեծությունը 20.9%-ով՝ հիմնականում պայմանավորված բարձր եկամտաբեր սպառողական ու առևտրի վարկերի աճով: Չնայած տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում բավականին զսպված է, այնուամենայնիվ այն էապես կարևորվում է՝ պայմանավորված այն փաստով, որ բանկային համակարգի եկամուտների հիմնական աղբյուր են հանդիսանում տոկոսային եկամուտները (համախառն եկամուտների 44%-ը 31.12.05թ. բաժին է ընկել տոկոսային եկամուտներին), և տոկոսային մարժայի նվազման սցենարի դեպքում, այլ հավասար պայմաններում, ակնկալվում է բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտների նվազում:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2005 թվականի ընթացքում վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Տարեվերջին ՀՀ տարածքում գործել են տասը վարկային կազմակերպություններ (երկու մասնաճյուղերով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և յոթը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

Վարկային կազմակերպությունները վերջին երկու-երեք տարիներին դրսևորում են արագատեմպ զարգացման միտումներ. այս տարի, ինչպես և նախորդ տարի, վարկային կազմակերպությունները, բանկային համակարգի համեմատությամբ, ապահովել են ակտիվների առաջանցիկ աճի տեմպեր: Վարկային կազմակերպությունները ակտիվ գործունեություն են իրականացնում վարկային և լիզինգային շուկաներում: Չնայած այն հանգամանքին, որ դրանց կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները գերազանցում են բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները, սակայն բնակչության լայն խավի համար վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայությունները համարվում են ավելի մատչելի:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 34.5%-ով՝ ի հաշիվ տարվա ընթացքում բացված մեկ վարկային կազմակերպության և ևս երեք գործող վարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր 1.1 մլրդ դրամի չափով կանոնադրական հիմնադրամի համալրմամբ: Տարեվերջին կապիտալը կազմել է 4.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 4.6%-ը:

Պարտավորություններն ավելացել են 46.2%-ով (1.1 մլրդ դրամով) և կազմել 3.5 մլրդ դրամ: Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունները տարեվերջին կազմել են 1.7 մլրդ դրամ: Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 1.2 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում աճել է 39.5%-ով (2.2 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 7.9 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 1.8%-ը: Ակտիվների կազմում զգալի ավելացել են տնտեսությանը տրամադրած վարկերը՝ 102%-ով և լիզինգը՝ 54%-ով և կազմել են համապատասխանաբար 4.8 մլրդ դրամ և 1.3 մլրդ դրամ:

2005 թվականին վարկային կազմակերպությունների չբաշխված շահույթը կազմել է 80 մլն դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 1.0%, իսկ ըստ կապիտալի՝ 1.8%:

2005 թվականին նոր խմբագրությամբ է հաստատվել «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալը, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը: Մեղմացվել են վարկային կազմակերպություններին ներկայացվող որոշ պահանջներ, որպեսզի ՀՀ տարածքում գործող միկրովարկավորում իրականացնող հիմնադրամներին հնարավորություն տրվի ստանալու վարկային կազմակերպության լիցենզիա:

Բազմաթիվ փոքր ծավալով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի նկատմամբ սահմանվել են ավելի մեղմ տարածքային և տեխնիկական հագեցվածության պահանջներ:

Վարկային կազմակերպության խորհրդի անդամները չեն անցնելու որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում հարցազրույցի ձևով: Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների համար պարզեցվել է վարկային կազմակերպությունների կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման ընթացակարգը:

«Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, որոնց առնվազն 30%-ը պետք է ապահովված լինի առաջնակարգ (AAA (Aaa1)-ից A-(A3)) վարկանիշ ունեցող կազմակերպությունների կողմից: Վերջինս սահմանվել է՝ հաշվի առնելով վարկային կազմակերպությունների կողմից արժեթղթերի թողարկման նախադեպի բացակայությունը, ներդրողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը և արժեթղթերի շուկայի ցածր զարգացածությունը: Կախված ապագայում վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ ձևավորվող պահանջարկից, այդ արժեթղթերի վարքագծից և վարկային կազմակերպությունների կողմից իրենց պարտավորությունները մարելու կարողությունից (և պատմությունից)՝ առաջնակարգ ապահովվածության պահանջը կարող է հանվել: Արժեթղթերի թողարկումը հնարավորություն կտա վարկային կազմակերպություններին դուրս գալ արժեթղթերի շուկա:

2005 թվականին հաստատվել է «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը՝ նոր խմբագրությամբ: Կանոնակարգը վերաձայվել է 2004 թվականի վերջին կանոնակարգ 14-ում կատարված փոփոխություններին համաձայնեցնելու և հաշվետվական ձևերի պարզեցման նպատակով:

Կանոնակարգի հետ միասին հաստատվել է «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների կազմման» ուղեցույցը:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ

2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 23, ապահովագրական բրոքերային ընկերությունների թիվը՝ 7: 2005 թվականի ընթացքում ապահովագրական գործունեության լիցենզիա են ստացել 2 ապահովագրական ընկերություն՝ «Գոբա» ապահովագրական ՍՊԸ-ն, «Ինօրիենք» ապահովագրական ՍՊԸ-ն և մեկ ապահովագրական բրոքերային ընկերություն՝ «էֆ Սի Այ Բի» ՍՊԸ-ն:

2005 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալն ավելացել է 58.4%-ով (1.6 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 4.4 մլրդ դրամ:

Կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի 1.8 մլրդ դրամ աճով:

Տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 299.0 մլն դրամ, որը 98.8%-ով գերազանցել է նախորդ տարվա շահույթի մեծությունը:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններն աճել են 53.4%-ով (1.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 5.5 մլրդ դրամ:

Պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ապահովագրական պահուստների 1.8 մլրդ դրամ աճի արդյունքում, մասնավորապես՝ 1.2 մլրդ դրամով ավելացել է «Վնասների պահուստներ և տեխնիկական պահուստներ» հաշիվը և 0.6 մլրդ դրամով՝ «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ» հաշիվը: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններում ապահովագրական պահուստների տեսակարար կշիռը 2005 թվականին ավելացել է 14 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 67.7%: Ընդհանուր պարտավորություններում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև «Հաշվարկներ վերաապահովագրությանը փոխանցած ռիսկերի գծով» հաշիվը (17.0% տեսակարար կշիռ) և «Հաշվարկներ տարբեր կրեդիտորների հետ» հաշիվը (10.7% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներն ավելացել են 55.6%-ով (3.5 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 9.9 մլրդ դրամ:

Ակտիվների կազմում զգալի աճել է «Վերաապահովագրողների բաժինը վնասների պահուստում» (1.0 մլրդ դրամ աճ), «Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ» (1.3 մլրդ դրամ աճ) և «Ավանդային հաշիվներ բանկերում» (0.6 մլրդ դրամ աճ) հոդվածների ցուցանիշը:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներում մեծ տեսակարար կշիռ ունեն «Վերաապահովագրողների բաժինը ապահովագրական պահուստում» (23.2% տեսակարար կշիռ), «Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ» (15.9% տեսակարար կշիռ), «Ավանդային հաշիվներ բանկերում» (11.1% տեսակարար կշիռ) և «Հիմնական միջոցներ (10.8% տեսակարար կշիռ) հոդվածները:

31.12.2005 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը կազմել է 23.5 հազար հատ (նախորդ տարի՝ 29.5 հազար հատ): Հատկանշական է որ ապահովագրական շուկայում կյանքի ապահովագրությունը գրեթե բացակայում է. կյանքի ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է ընդամենը 45 հատ: Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերով ապահովագրական գումարների մեծությունը տարեվերջին կազմել է 1.73 տրլն դրամ, որից՝ 1.69 տրլն դրամը կամ 97%-ը վերաապահովագրության փոխանցած գումարների մեծությունն է:

Հաշվետու տարում ապահովագրավճարների մեծությունը կազմել է 4.9 մլրդ դրամ, իսկ ապահովագրական հատուցումների մեծությունը՝ 516 մլն դրամ: 2005 թվականին ապահովագրավճարների 28%-ը բաժին է ընկել ավիացիայի, 20%-ը՝ մեքենաների (նաև ուղևորների), 16%-ը՝ պատասխանատվության, 13%-ը՝ գույքի, 8%-ը՝ բժշկական ապահովագրությանը և այլն: Տարվա ընթացքում կատարված ապահովագրական հատուցումներից ամենամեծ մասը բաժին է ընկել մեքենաների (նաև ուղևորների) ապահովագրության դիմաց փոխհատուցմանը՝ 36%, իսկ ավիացիայի, պատասխանատվության և բժշկական ապահովագրության դիմաց կատարված հատուցումներին՝ համապատասխանաբար 18%, 14% և 13%-ը:

2005 թվականին համեմատաբար բարձր է եղել դժբախտ պատահարների (33%), բեռների (25%), մեքենաների (19%) և բժշկական (17%) ապահովագրությունների վնասաբերության ցուցանիշը (ապահովագրական հատուցումներ / ապահովագրավճարներ x 100% հարաբերակցությունը):

2005 թվականին ապահովագրական գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական դաշտում կատարվել են մի շարք լրացումներ: Ապահովագրական ընկերությունների գործունեության կարգավորման դաշտի կատարելագործման նպատակով 2005 թվականին ընդունվել են «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, դրա կիրառման մասին հրահանգը, ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մասին հրահանգը սահմանելու մասին», «Ապահովագրական ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվների չափը, դրանց ձևավորման և հաշվարկման կարգը, ինչպես նաև այդ նորմատիվների վերաբերյալ հաշվետվության ձևը, դրա լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները սահմանելու մասին», «Ապահովագրական պահուստների տեսակները և ձևավորման կարգը սահմանելու մասին», «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը սահմանելու մասին», «Ապահովագրական սակագների հիմնավորման կարգը սահմանելու մասին», «Արխիվային փաստաթղթերն առանձնապես արժեքավոր և հազվագյուտ ճանաչելու, դրանց

հաշվառման, ապահովագրական պատճենների ստեղծման և պահպանության կարգը հաստատելու մասին», «Ապահովագրական վկայագրերի հաշվառման, պահպանման և լիազորված պետական կառավարման մարմին եռամսյակային հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին», «Ապահովագրական գործակալի գործունեության կանոնակարգի օրինակելի ձևը, դրանում ներառվող պայմանները և առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

ՀՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ

31.12.2005 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացրել 18 ընկերություններ: Բոլոր 18 ընկերություններն ունեն բրոքերային գործունեության լիցենզիա, ընդ որում՝ դրանցից 5-ը ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը ունի նաև պահառուի լիցենզիա:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում գործարքներն իրականացվել են 3 տիպի գործիքներով՝ պետական պարտատոմսեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց համար շուկայի հիմնական գործիք են հանդիսանում պետական պարտատոմսերը, որոնք ընդհանուր գործարքների ծավալում կազմել են շուրջ 98.8%: Բաժնետոմսերով գործարքները կազմել են շուրջ 1.0%, իսկ այլ արժեթղթերով գործարքների տեսակարար կշիռը չի գերազանցել 0.2% ցուցանիշը:

2005 թվականին արժեթղթերի շուկայի բրոքերների/դիլերների գործունեության շրջանակներում իրականացված գործարքների շրջանառության ծավալները կազմել են 121.4 մլրդ դրամ, որից՝ պետական պարտատոմսերի գծով (ներառյալ ռեպո գործարքները)՝ 119.9 մլրդ դրամ, այլ արժեթղթերի (կորպորատիվ պարտատոմսեր) գծով՝ 0.2 մլրդ դրամ, բաժնետոմսերի գծով՝ 1.3 մլրդ դրամ, ընդ որում՝ բաժնետոմսերի շրջանառության ծավալի 1.1 մլրդ դրամը կատարվել է Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պետական պարտատոմսերի շրջանառության ծավալների 50.3%-ը բաժին է ընկել պետական միջին ժամկետայնությամբ պարտատոմսերին, 48.3%-ը՝ պետական երկարաժամկետ պարտատոմսերին, 1.5%-ը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերին:

04.10.2005 թ. ընդունվել է ««Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-179-Ն օրենքը, որով հիմնականում կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները:

1. Վարկային կազմակերպություններին թույլ է տրվել առանց համապատասխան մասնագիտացված գործունեության լիցենզիայի Հայաստանի Հանրապետության, համայնքների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող (թողարկված) կամ երաշխավորված արժեթղթերով իրականացնել բրոքերային (դիլերային),

հավատարմագրային կառավարման և պահառության գործունեություն: Փոփոխության նպատակն է արժեթղթերի շուկայում վարկային կազմակերպությունների և բանկերի նկատմամբ սահմանված պահանջների նույնացումը՝ ուղղված պետական պարտատոմսերի շուկայի զարգացմանը.

2. Ֆոնդային բորսային իրավունք է վերապահվել իրականացնել բորսայական առևտրի ընթացքում կնքված գործարքների քլիրինգի (փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում) գործառույթը: Փոփոխության նպատակն է նվազեցնել բորսայական առևտրի ընթացքում առաջացող համակարգային և տեղեկատվական ռիսկերը: Ընդ որում, պետք է նշել, որ ներկայումս ֆոնդային բորսայում արդեն իսկ ներդրված առևտրային համակարգը հնարավորություն է ընձեռում օրենքն ընդունվելու դեպքում անմիջապես իրականացնել արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգը:

3. Հստակեցվում են ֆոնդային բորսայում արտարժույթի առևտրի կազմակերպման պայմաններն ու առևտրի մասնակիցների շրջանակը: Գործող օրենքի 105 հոդվածի 2-րդ մասի փոփոխությամբ հստակ նշվում է, որ ֆոնդային բորսան արտարժույթի առևտուրը կազմակերպում է բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա: Օրենքի 106 հոդվածի 2-րդ մասի լրացման համաձայն՝ բրոքերներից և դիլերներից բացի, արտարժույթի բորսայական առևտրին ուղղակիորեն մասնակցելու իրավունք են ստանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները և արժութային դիլերները. այսինքն՝ արտարժութային շուկայի հիմնական մասնակիցները: Փոփոխությունների նպատակն է նպաստել ՀՀ արտարժույթի բորսայական շուկայի ձևավորմանը:

4. Ֆոնդային բորսային իրավունք է վերապահվում կազմակերպել և անցկացնել արժեթղթերի շուկայի վերաբերյալ ուսումնական դասընթացներ, ինչպես նաև մասնագիտական որակավորման քննություններ: Փոփոխության նպատակն է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58 հոդվածի 2-րդ մասի համաձայն որակավորման քննությունների կազմակերպման իրավասության պատվիրակման դեպքում հնարավորություն ընձեռել ֆոնդային բորսային գործնականում իրականացնել այդ գործառույթը: Վերջինս բխում է նրանից, որ ներկայումս գործող օրենքի 105 հոդվածի համաձայն՝ ֆոնդային բորսան իրավունք ունի իրականացնելու միայն բորսայական առևտրի կազմակերպումը:

08.12.2005 թ. ընդունվել է ««Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-179-Ն օրենքը, որով կատարված փոփոխությունները և լրացումները հիմնականում վերաբերում են արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության գործառույթները ՀՀ կենտրոնական բանկին փոխանցելու հետ կապված միջոցառումներին, այդ միջոցառումների իրագործման կապակցությամբ առաջացող հարաբերություններին:

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԸ ԵՎ ԳՐԱՎԱՏՆԵՐԸ

31.12.2005 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 375 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը): 2005 թվականի ընթացքում թվով 103 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել, որից 71-ինը՝ արժութային օրենսդրության խախտումների համար: Տարվա ընթացքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրվել թվով 135 արտարժույթի փոխանակման կետերի: Նախորդ տարվա համեմատ հաշվետու տարվա ընթացքում արտարժույթի փոխանակման կետերում արձանագրվել է արտարժույթի առք ու վաճառքի ընդհանուր ծավալի աճ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի ընդհանուր ծավալը 2005 թվականին ավելացել է 48.5%-ով կամ 168.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ եվրոյի առք ու վաճառքի ընդհանուր ծավալը՝ 106%-ով կամ 19.8 մլն եվրոյով:

